

Փնտռել զՔրիստոս

զայն երկրպագելու նպատակով

«Մենք... եկամք երկրպագելու իրեն» (Մտք. 2.2): Մոգերը նորածին Փրկիչը տեսնելու հետաքրքրուած ենէ մղուած չէ, որ կը փնտռէին զինք: Անոնց նպատակը իրեն երկրպագելն էր: Տարբեր նպատակով պէտք է փնտռենք Քրիստոսը: Այսօր որքա՛ն մարդիկ կան, որոնք եկեղեցի կ'երթան ո՛չ թէ հանդիպելու Քրիստոսի եւ երկրպագելու իրեն, այլ հանդիպելու իրենց բարեկամներուն: Եկեղեցի կ'երթան ո՛չ թէ լսելու Քրիստոսի ձայնը, այլ լսելու քարոզիչին կամ իրարու ձայնը: Ինչպէս մոգերը, երբ տուն մտան իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցին Յիսուսի վրայ եւ ո՛չ թէ ուրիշ բանի մը վրայ, այնպէս ալ մենք, երբ եկեղեցի երթանք՝ պէտք է մեր հայեացքը կեդրոնացնենք Յիսուսի վրայ:

ՄԵԿ ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ ԿԱՐԴԱՆՔ ԱՄԲՈՂՁ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ

ՅՈՒՆՈՒԱՐ 2020

ՕՐ	ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ	ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ
1	Ծննդոց 1,2,3	Մատթէոս 1
2	Ծննդոց 4,5,6	Մատթէոս 2
3	Ծննդոց 7,8,9	Մատթէոս 3
4	Ծննդոց 10,11,12	Մատթէոս 4
5	Ծննդոց 13,14,15	Մատթէոս 5:1-26
6	Ծննդոց 16,17	Մատթէոս 5:27-48
7	Ծննդոց 18,19	Մատթէոս 6:1-18
8	Ծննդոց 20,21,22	Մատթէոս 6:19-34
9	Ծննդոց 23,24	Մատթէոս 7
10	Ծննդոց 25,26	Մատթէոս 8:1-17

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸԱՔԱԾԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - [facebook-ի էջ jerak](#) Ծրագրի քերթ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ


**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՔՉԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Կազմակերպութեամբ Կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածուծիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Լոյիսաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի գաւակներուն համար:

Միտելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԲՈՒ ԽՍՏԵՂ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԻՆՇՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ՅՈՒՆՈՒԱՐ 2020 ԹԻՒ 1

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
ՃՂ. ըմբ. 2.11-15: Մտ 1.18-25
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 1.18-25

**ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՅԱՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
1.18-25**

Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի ծնունդը: Իր մայրը՝ Մարիամ, նշանուած էր Յովսէփի հետ, սակայն նախքան ամուսնութիւնը Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն:

Յովսէփ՝ անոր նշանածը, արդար մարդ մը ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ խայտարակել զայն, այլ խորհեցաւ լռելեայն ետ ընել իրենց նշանախօսութիւնը: Մինչ այս մասին կը մտածէր, ահա Տիրոջ Հրեշտակը երազի մը մէջ երեւցաւ իրեն եւ ըսաւ.՝ Յովսէփ, Դաւիթի որդի, մի՛ վախնար ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետեւ իր մէջ յղացուածը Սուրբ Հոգիէն է: Որդի մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ:

Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի այն ինչ որ Տէրը ըսաւ Եսայի մարգարէին միջոցաւ.՝ «Ահա կոչուր պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչեն Հիմմանուէլ», որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ:

Երբ Յովսէփ արթնցաւ, կատարեց ինչ որ Տիրոջ Հրեշտակը հրամայեց իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ զաւակը ծնաւ, եւ զայն Յիսուս կոչեց:

ՆՈՐ ՏԱՐԻ

«Երբ Քրիստոս՝ ձեր կեանքը
յայտնուի, այն ատեն
դուք ալ փառքով պիտի
յայտնուիք անոր հետ»
(Կղ. 3.4)

Իսկական նոր տարին

Դարձեալ Նոր Տարուան մը սեմին ենք: Եւ հարց կու տամ, թէ ի՞նչն է որ տարին կ'ընէ «նոր»: Իսկական Նոր Տարին կը սկսի միայն այն ատեն՝ երբ Աստուած շնորհէ մեզի «նոր սիրտ» ու «նոր հոգի» (Եզ. 36.26): Չկայ Նոր Տարի առանց սրտի ու հոգիի նորոգութեան: Չկայ Նոր Տարի առանց Քրիստոսով նոր մարդ դառնալու որոշումին: «Եղէք նոր մարդ» կը յանձնարարէ Աստուծոյ մարդը՝ Պօղոս (Եփ. 4.24): Նոր Տարին կը դառնայ նոր, երբ թոյլ տանք որ Աստուծոյ Հոգին «նոր իւղով» օժէ մեզ (Աղ. 92.10): Իւղով մը՝ որ իրեն հետ պիտի բերէ աստուածային օրհնութիւններ: Սիրելի՛ եղբայր եւ քոյր, քեզ կը հրաւիրեմ, որ Նոր Տարին դիմաւորես նոր որոշումով մը: Այդ որոշումը Քրիստոսի դառնալու եւ Քրիստոսի վստահելու որոշումն է:

ՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԵՐԸ ԻՆՉՊէ՞Ս ԿԸ ՔԱԿՈՒԻՆ

Երբ մարդ կը խոստովանի իր գործած մեղքերը եւ սրտանց կ'ապաշխարէ, անգամ մըն ալ չմեղանջելու որոշումով՝ կ'արժանանայ մեղքի քաղցրութեան եւ յանգստի թողութեան:



ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ՏԻՏՈՍԻՆ 2.11-15

Որովհետեւ Աստուած իր շնորհքը յայտնեց՝ որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը մեզ կը մղէ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, որ փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէն, եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձնէ, բարի գործերու նախանձախնդիր:

Այս բաները սորվեցուր հաւատացեալներուդ: Քաջալերէ՛ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ՛ հեղինակութիւնդ գործածելով, այնպէս՝ որ ոեւէ մէկը քեզ չարհամարիէ:

ՇՆՈՐՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
2020

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ԾՆՈՒՆԴԸ

**Հարց. Ինչ՞ու Հայ եկեղեցին
Ծնունդն ու Մկրտութիւնը միասին
կը սօսէ, մինչ միւսները կը սօսեն ա-
ռանձին: Եւ ինչ՞ու մենք կը սօսենք
Յունուար 6-ին, իսկ միւս ազգերը՝
Դեկտեմբեր 25-ին:**

Պատասխան. Մինչեւ չորրորդ դար բոլոր քրիստոնեաները այս սօսերը կը նշէին Յունուար 6-ին, ինչպէս կը հաստատեն Յոյն, թէ Լատին մատենագիրները: Չորրորդ դարու Ծնունդը Դեկտեմբեր 25-ին եւ Մկրտութիւնը Յունուար 6-ին սկսան սօսել, նախ՝ Երուսաղէմի մէջ գործնական դրդապատճառէ մղուած (որովհետեւ նոյն օրը Բեթղեհէմ՝ պատարագ եւ ապա Յորդանան գետ՝ Մկրտութիւն կատարելը դժուար էր), իսկ Արեւմուտքի մէջ, իսպառնելու համար հեթանոսական Սաղուրն՝ արեւաստուծոյ տօնը, որ կապուած էր ձմեռնային արեւադարձի օրուան հետ, երբ ցերեկուայ տեւողութիւնը կը սկսի աւելնալ: Արեւմուտքը յոյս ունէր այս ձեւով հեթանոսական տօնը փոխարինել Քրիստոս՝ Արդարութեան Արեգակի ծննդեան տօնով: Հայ եկեղեցին զերծ ըլլալով այս մտահոգութիւններէն հաստատ մնաց աւանդութեան: Ռուս Ուղղափառ եկեղեցին Ծնունդը՝ կը սօսէ Դեկտեմբեր 25-ին, իսկ Մկրտութիւնը՝ Յունուար 6-ին:

Նկատի ունենալով, որ Ռուսաց եկեղեցին Գրիգորեան տոմարի (Նոր տոմարի) չի հետեւիր, այլ կը գործածէ Յուլեան տոմարը (Հին տոմար), ապա բնականաբար Ծնունդը կը գուգադիպի՝ Դեկտեմբեր 25+13 օր = Յունուար 7-ին, իսկ Մկրտութիւնը համապատասխանաբար՝ Յունուար 6+13 օր = Յունուարի 19-ին: Ծնունդն ու Մկրտութիւնը այս ձեւով կը նշեն նաեւ Ռուսաց մէջ եղող Հայ համայնքները:

Համաձայն Հին Կտակարանի, ոեւէ մէկը իրաւունք չունէր փահանայութիւն ընելու, եթէ տարիքը երեսունը անց չըլլար: Ուստի երբ Յիսուս սկսաւ փարոգել (սկսաւ անոր փահանայութեան շրջանը) Ան երեսուն տարեկան էր: Ան սկսաւ փարոգել Մկրտութեան օրերէն յետոյ: Այս առումով ալ նախնի եկեղեցին Ծնունդ ու մկրտութիւն կը նշէր միեւնոյն օրը, որուն հարագատ մնաց Հայ եկեղեցին մինչեւ այսօր:



ՀԱՐՅ.- ԻՆՉ Է ՏՍՕՐԱԷՔԸ:

Պատասխան. Աւանդութիւնը սկիզբ կ'առնէ Առաքելական դարուն, երբ առաքելները եւ հոգեւորականները կը շրջէին տունները եւ կ'աւետէին Յիսուսի Ծնունդը եւ Յարութիւնը: Այս սովորութեան համաձայն փահանաները կը շրջին տունները՝ փարոգելով եւ աւետարանը ընթերցելով: